ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/220

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Մասնակից՝ «Նամենասեդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019 գրությամբ «Նամենասեդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 19.11.2019թ.-ի թիվ 20/1018 գրության հիման վրա, 21.11.2019թ.-ին «Նամենասեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ:

27.11.2019թ.-ին և 06.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 19.11.2019թ. թիվ 20/1018 գրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Նամենասեդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. «Նամենասեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 22.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Նամենասեդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 03.12.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱԱԾ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գեաեշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1.2 կետի համաձայն՝ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ձավելված 1-ում պայմանագրի կատարումն իրականացնող աշխատանքների քանակը չի բավարարում հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով 1-ին չափաբաժնի մասով սահմանված պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների քանակը, որի արդյունքում նիստը կասեցվել է և արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար որոշում է կայացվել ծանուցել «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ին:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 15.11.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1.2 կետի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1.2 կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել «ՆԱՄԵՆԱՍԵԴ»

ՍՊԸ-ին, որպեսզի հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին ներկայացնել շտկված ձավելված 1-ը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, մինչդեռ 12.11.2019թ. մինչև 15.11.2019թ. ընկած ժամանակահատվածում գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն այդպես էլ չի ստացել անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը, այլ փոխարենը 13.11.2019թ. ստացել է միայն New folder անվամբ փաթեթը, որտեղ եղել է միայն հայտերի բացման արձանագրությունը:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ին ոչ միայն չի ուղարկվել շտկում կատարելու ծանուցում, այլ անգամ անհասկանալի և Ընկերության համար անկանխատեսելի New folder անվամբ փաթեթում առկա արձանագրության մեջ նույնպես եղել են բացթողումներ: Նախ, հստակ նշված չի եղել, թե ինչ անհապատասխանություն է արձանագրվել փաստաթղթերում, հրավերի կոնկրետ որ պահանջն է խախտել ՍՊԸ-ն և ինչ պետք է ուղի: Բացի այդ, նշված արձանագրությունից նաև անհասկանալի է, թե մինչև որ ժամկետը պետք է կատարվի

շտկումը: Մինչդեռ օրենսդիրը «Ծանուցում» եզրույթը օգտագործելիս նկատի է ունեցել այն կարևոր հանգամանքը, որ ծանուցման մեջ հստակ պետք է նշվի կոնկրետ անհապատասխանությունը, մասնակցի կողմից շտկման ենթակա փաստաթուղթը, և ամենակարևորը, շտկման ժամկետը, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից նախկինում կայացրած իրավապարտադիր որոշումներով հստակ արձանագրվել են, որ մասնակցին ընդամենը արձանագրություն ուղարկելը չի կարող դիտարկվել որպես մասնակցին պատշաճ ծանուցում շտկում կատարելու վերաբերյալ:

Այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի /ԳԲՔԱ-ՆԳ-2019/26/ և Լ. Օհանյանի /ԳԲՔԱ-ԼՕ-2019/14/ կողմից կայացրած որոշումներով արձանանագրել է հետևյալը.

«Ընթացակարգի արդյունքում մի շարք չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ին թիվ 2 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն պետք է ծանուցեր հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և մասնագիտական փորձառությունն հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին, սակայն մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին որևէ ծանուցում չի ուղարկվել:

Վերոհիշյալ փաստը հաստատել է նաև Պատվիրատուի ներկայացուցիչը՝ հայտնելով, որ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին ծանուցումը էլեկտրոնային փոստի միջոցով չի ուղարկել «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն, այլ միայն ուղարկել է արձանագրության պատճենը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.04.2019թ. թիվ 1/26-1/6025-19 գրությամբ տրամադրված պարզաբանմամբ նույնպես հայտնել է իր դիրքորոշումը այն մասին, որ Պատվիրատուի կողմից բարձրացված հարցը կարգավորված է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 43-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը պարտավոր էր հայտերի բացման նիստի արձանագրության

բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակեր տեղեկագրում, ինչպես նաև պարտավոր էր էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սակայն գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից խախտվել է վերը նշված կարգով սահմանված պահանջները, ինչն և իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է «Արտավազդ Սարոյան» Ս/Ձ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Գտնում ենք, որ այս պարագայում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-իև և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

Միևնույն ժամանակ, գնահատող հանձնաժողովի կողմից նշվւսծ նորմերի խախտումը հանգեցրել է նրան, որ «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ն ոչ իրավաչափորեն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցևելի ցուցակում» ներառվելու վտանգի առջև:»:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Նամենասեդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներուն ստանձնած պարտավորության խախտում և ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/220 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից հավելված 1-ում պայմանագրի կատարումն իրականացնող աշխատակիցների քանակը չի բավարարում հրավերի 2.5 կետի 4 ենթակետով թիվ 1 չափաբաժնի մասով սահմանված պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների քանակը, ուստի Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «Նամենասեդ» ՍՊԸ-ին առաջարկել շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.11.2019թ.-ին Մասնակցի namenased@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի նիստի արձանագրությունը:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, Հանձնաժողովը որոշել է հրավերի 7.10 կետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում ուղարկված լինելու հանգամանքի վերաբերյալ ներկայացվել է armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019 գրությամբ «Նամենասեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 01.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նամենասեդ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 13.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից հավելված 1-ում պայմանագրի կատարումն իրականացնող աշխատակիցների քանակը չի բավարարում հրավերի 2.5 կետի 4 ենթակետով թիվ 1 չափաբաժնի մասով սահմանված պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների քանակը, ուստի Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և «Նամենասեդ» ՍՊԸ-ին առաջարկել շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 13.11.2019թ.-ին Մասնակցի namenased@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/2» ծածկագրով ընթացակարգի նիստի արձանագրությունը:

Հանձնաժողովի 15.11.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նամենասեդ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, Հանձնաժողովը որոշել է հրավերի 7.10 կետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում ուղարկված լինելու հանգամանքի վերաբերյալ ներկայացրել է armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցում ուղարկելու միջոցով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն էլեկտրոնային փոստի միջոցով չի ուղարկել «Նամենասեդ» ՍՊԸ-ին, այլ միայն ուղարկել է արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) պատճենը:

Արձանագրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հանձնաժողովի կողմից չի նշվել, թե արձանագրված անհամապատասխանությունը քանի օրվա ընթացքում պետք է շտկել և որ էլեկտրոնային փոստի հասցեին է պետք այն ուղարկել:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ հայտերի բացման նիստի ընթացքում «Նամենասեդ» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով չի տեղեկացրել մասնակցին և չի առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ խախտելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19209-2019 գրությամբ «Նամենասեդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/220 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**